ՆՈՐ-ԴԱՐ

№ 170 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 30 Հոկտեմբերի 1892 Ուրբաթ, 30 Հոկտեմբերի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 170

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 իր. մինչեւ 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ТИФЛИСЪ 31 ОКТ. 1892 ПОЧТА-ТЕЛЕГРАФЪ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն. — Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան երկու որոշում։ Շոգենաւ Կուրգեան վրայ. Խմբագրութեան կողմից։ Շուշուց։ Բագուից։ Նոր-Նախիջեւանից։ Երեւանից։ Փոթուց։ Բալախանուց։ Հրաշքներ Իտալիայում։ Բեռանիժի երգերը։

Ինչպէս անել։
Հեմոռոյներ կամ քեմոցիկներ։
Թղթակցութիւններ. — Խաչակալ գիւղ։
Քաղաքական. — Իրլանդացիք։ Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Բանասիրական. — Ոգի և մարմին։
Տիգիկատուր։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնն իւր վերջին նիստում չորեքշաբթի, հոկտեմբերի 28-ին, ընտրեց իրրև տեսչի պաշտօնակատար՝ պ. Կարապետ Կոստանեանցին որոշելով ներկայացնելու նրան վեհափառ Կաթողիկոսին հաստատելու տեսչի պաշտօնին։

Այնուհետեւ հոգաբարձութիւնը 9-ը ձայնով 3-ի դէմ որոշեց արգելել արժ. Սարգիս քահանայ Բէգնազարեանի «Կրօնի համառօտ վարդապետութիւն» գիրքը և դուրս ձգել դպրանոցում ընդունուած գրքերի ցուցակից։

Գործի քննութիւնից յայտնւում է, որ անցեալ տարի ամսին հոգաբարձութիւնը դպրանոցի կանոնադրութեան 16-րդ յօդուածի վրայ հիմնուած՝ վերոյիշեալ կրօնի դասագրքից մի օրինակ ուղարկելով ս. Սինոդին, խնդրում է որոշել թէ այդ գիրքը կարելի է ընդունել հոգեւոր դպրանոցում իրրև դասագիրք թէ ոչ։ Ս. Սինոդը, տեղեակ լինելով այդ մասին մի պատասխան չէ տուած։

Հոգաբարձութիւնը տեսնում է որ «Արարատ»-ում դպրոցական յանձնաժողովը յայտնում է թէ ինքն անձեռնհաս է վերը յիշած գրքի մասին որոշումն անելու Կաթողիկոսին վերապահուած լինելով այդ մասին անելի անօրինութիւնը և թէ այն, որ Ներսիսեան դպրանոցում արժ. Ս. քահանայ Բէգնազարեանի գիրքն արդէն վաղուց է, որ պատրաստուելոցիչ է աշակերտների համար իրրև կրօնի դասագիրք։ Յայտնւում է և այն, որ այդ գիրքը մտցրել է դպրանոցի նախկին տեսուչը։

Ուրեմն Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը վերոյիշեալ կրօնի դասագրքի մասին ս. Սինոդից մինչև օրս մի որևէ որոշումի սպասելով, մտմտուկի շնորհիւ իմանում է, որ այդ գիրքն առանց իւր գիտութեան գործ է ածւում իրրև դասագիրք դպրանոցում։

Որովհետև այդ գիրքն այժմս իրրև ընդհանուր արգելուած է, մնում մեզ իմանալ թէ ով է վհատում այն փորերը, որ վհատել են աշակերտներին այդ գիրքն առնելով։

—

Կուր գետի վրայ Բագուի և Սալեանի միջև երթևեկելու համար մի անլուսաւոր ապրանքակիր և մարդատար շոգենաւ է շինուած «Սալեանեց» անունով, որ մի ժամում անցնում է 18 վերստ։

—

Որովհետև տարին մտնում է իւր վախճանին, խմբագրութիւնս խնդրում է նրանցից, որոնց վրայ ներկայ կամ անցեալ տարիներից ապառիկներ են մնում կամ միւրևէ գումար պարտ են՝ մինչև օրս այդ մասին մի պատասխան չէ տուած։

Հոգաբարձութիւնը որոշում է նոյնպէս «Նոր-Դար»-ին, չտապել ուղարկել, մտածելով որ երեքն երկուց ձրի չէ ուղարկուել, քանի որ լրագիրը ձրի ոչ չարւում և ոչ էլ տալւում է։

—

ՇՈՒՇՈՒՅ, մեզ գրում են. — Մեկրեցոց եկեղեցու ծխականներից ոմանք իրենց սոորագրութեամբ մի նամակ ուղղելով Խմբագրութեանդ, որով աշխատում են ցոյց տալ Լիմ իրենց պաշտպանած դատն արդար է և թէ իրենց Թեկնածուն արժանի է բանաւոր հօտը հովուելու։ Նրանք մինչև այսօր լռութեամբ էին գործում, խաւարն մէջ էին պահում ամեն ինչ, բայց այժմ յանդգնել են մի արշաւանք գործել Ճշմարտութեան դէմ և այն՝ Ճշմարտութեան անունով։

Ասում են, թէ քահանայացուն պատրաստ է, աւարտած է Շուշու Թեմական դպրանոցը նրա ծախքով ժամանակը։ Երեք անգամ այդ ծխականները պիտի են ս. Սինոդին՝ քահանայացնելու համար Մեղրեցոց եկեղեցու վրայ և երեք անգամ էլ մերժուած է եղել։ Դրանք ի վերջոյ սոխալուել են ուրիշ միջոցների դիմել, գիւղի համար ձեռնադրել տալ և տալս քաղաքը փոխադրելու հոգսը քաշել։

Ս. Սինոդին ուղարկուած է և մի այլ խնդիր հակառակ առաջինին։ Այստեղ սոորագրութեան թիւը 450-ի չէ հասնում, այլ 100-ի։ Բայց միայն այդ թուի մէջ ամփոփուում է եկեղեցու ծխականների բարձր և ինտելիգենտ ամբողջ դասակարգը։

Ուրախալին այն է, որ այս վերջին խնդրին սոորագրած է և եկեղեցու միաբանութիւնը։ Դրանք ուզում են, որ բայ տեղը բռնի մի պատրաստուած, գործացած անձնաւորութիւն։ Եւ ինչպէս չմօտենալ այդ մտքին և չփայփայել։

—

ԲԱԳՈՒԻՑ. — «Նոր-Դար»-ում «Каспій» թերթից քաղած այն լուրը, թէ Բագուում օծուել է հայ կաթոլիկների եկեղեցին, սխալ է, որովհետև Բագուում հայ կաթոլիկների եկեղեցի չկայ. օծուել է հայ բողոքականների աղօթատունը, որ նոր են շինել գերմանացոց աղօթատան մօտ։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. — Թեմական դպրանոցի վարչութիւնը մտադմութեան մէջ է ընկել «Նոր-Դար»-ում իւր մասին տպուած առաջնորդող յօդուածի մասին։ Իսկ դպրանոցի հոգաբարձուներից երկուսը, որոնք համալսարանականներ են, չգիտեն որ ծայրից սկսեն դպրանոցի բարեվոխումները։

—

ԵՐԵՒԱՆԻՑ. — Հայր առաջնորդը ըստ պատուած է Թեմական դպրանոցի Նիւթական միջոցներն աւելացնելու գործով, որի ծրագիրը լաւ ապագայ է խոստանում։

—

ՓՈԹՈՒՑ. — Լսում ենք, որ Փոթու անցեալ անկատար և կատարեալ անցեալ ինտելիգենցիան նախագահութեամբ տէր Յակոբ Խուցեանի առաջնկայ կիրակի, նոյեմբերի 1-ին մատուղ պիտի անէ, որի համար վող են հաւաքում. ման ածուղ հանգանակութեան Թերթի Ճակատին այսպէս է գրուած.

«Մենք գործօնքս Փոթուայ հայ սաարակութեան վասն ազատութեան խոլերայի ձեռնադրեմք մորթել գմատաղս ընդհանրական (Թարգմանուած է վրացերէն՝ «սախլեցո սամխաո») առաւել փոյթօք գնելով զոչխար. մնացորդիքն զաղն և զգինին»։

Կարծես միայն մատաղ անելն էր պակաս։ Օրհնուածներ, մի՞թէ քիչ բանի պակասներ կան. ձեր մեռաց, որ եկեղեցին ուզում էիք չջնջատաեալ, ձեր մեռաց, որ գերեզմանատանը ծառեր էիք անկում, ձեր մեռաց... Էհ, ձեր մէկն ասենք։

—

ԲԱԼԱԽԱՆԻՑ. — Բալախանում գողութիւնները չեն դադարում. այսպէսի հետաքրքրացոր լցուել է վերջերս մարդկանցով. մէկի ձեռքն է կոտրած, մեսը կողքի վրայ է դաշոյնով վէրք ստացած, երրորդի վիզն է կարատուած... և դրանք բոլորն էլ գիշերային պահապաններ են, որոնք գողերի հետ այդպիսի կռիւներ են ունեցել, ինչպէս հոկտեմբերի 24-ին երեկոյեան ժամը 5-ին, Տատլինի արդիւնաբերանում գիշերային պահապանն իւր դաշոյնի մէկ հարուածով Թագնում է մէկ բալախանցու գլուխը։

—

Իտալիայի Մլան քաղաքից «Новости» Թերթին գրում են, որ հայ երգիչ պ. Բեգլար Ամիրջանեանցն այս օրերս քննութեան մէջ մրցելով ուրիշների հետ, իրրև առաջնակարգ աշակերտ է ընդունուած Մլանի կոնսերվատորիայում։ Մլանից այդ մասին Պետերբուրգի լրագրին գրուն ասում է, «որ պ. Ամիրջանեանցի Ձայնը բարիտոն է, որ նշանաւոր է իւր տեմբրի ուժով և գեղեցկութեամբ, և այնուհետև աւելացնում է, որ «Իտալիայում երգեցողութեան յայտնի պրոֆեսոր Ռոնկոնին վաստաւոր ապագայ է խոստանում երիտասարդ երգչին»։

Ոչինչ չունինք դրա դէմ ասելու. միայն մեզ գարմացնում է այն հանգամանքը, թէ այդ ինչ սոսկալի հրաշքները են գործում Իտալիայում։

Ի դէպ. մեր Ծովակն էլ Իտալիայի կարծեօք Նէապոլ քաղաքումն է,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ

(Մորից Լիւիէօ)

—

Ոգին և մարմինը մեզա մի ներդաշնակ միութեան մէջ չեն ձուլուում, այլ, ընդհակառակը, շատ անգամ ներկայացնում են իրարից գոտ մարմիններ։ Գեղեցիկ կազմուած մարմնի մէջ շատ անգամ բնակւում է կոպիտ, վայրենի, ցած ցանկութիւններով լի ոգի, Թագնուած է չիմարութիւն և անտարբերութիւն դէպի ամեն մի մեծ ու վեհ գործ. իսկ միևնոյն ժամանակ, անճոռնի, տգեղ մարդկի աչքի ընկնող դիրքը են կատարում գիտութեան աշխարհում։

Համանման օրինակները պատմութեան մէջ գիտելը շատ հետաքրքիր է, և մենք բազմիցս կըտեսնենք, որ սրի հուժկու հերոսներն երբեմն եղել են կաղ, բայց մեծ խելքի տէր մարդիկ, գերազանցել են իրենց տգեղութեամբ, այնպէս որ մարդ կզմայլես է եղել տեսնելով նրանց նիհար ու Թոյլ մարմինը։

Հին զօրավարներից մէկը, սպարտացոց Ագեսիլաս II-ը, հասակով շատ կարճ է եղել և մի ոտքն էլ պակաս։ Բայց և այնպէս նա Թշնամիների փոխարինն է եղել և, նրա ժամանակակից Քսենոփոնտն ասելով, գարմանալի քաջութեամբ կռուելիս է եղել պարսկաց գերազանց ուժերի հետ և ահագին վնասներ է հասցրել նրանց, ինչպէս և ամէնացիների, կորնթացիների և Թերացիների արիւնահեղ պատերազմների ժամանակ։ Վանդալացոց Թագաւոր Հենզերիքը, որին պատմութիւնը ներկայացնում է մի վոգբրաշատակ, անճոռնի, բայց միևնոյն ժամանակ շատ համարձակ և գործունեայ անձնաւորութիւն, նոյնպէս կաղ է եղել և տանջուելիս է եղել ուրքի անբուժելի ցաւից։ Նա նուաճեց ամբողջ հիւսիսային Աֆրիկան, Միջերկրական ծովի կղզիները և Իտալիայի մեծ մասը Հռոմի հետ միասին, որտեղ նա ուշադրութիւն չդարձնելով Լևոն I պապի միջնորդութեանը, Թոյլ տուեց իւր զօրքին քաղաքն երկու շաբաթ կողոպտել։ Կողոպտման վայրենի ծարաւը, որը ցոյց էին տուել վանդալները, առած էր զարձած ժողովրդի համար, և, երբ ժամանակակիցներից անիծուած Հենզերիքը մեռաւ 477 թ. փետրուարի 24-ին, նրա նուաճած ժողովուրդը կարողացաւ ազատ շունչ քաշել։

Անցեալ դարերի մեծ զօրավարներից մէկը, մոնղոլացոց հզօր Թագաւոր Թեմուրը, որ պատմութեան մէջ յայտնի է Թամերլան անունով, նոյնպէս կաղ էր և, բացի դրանից, ազատ չէր կարողանում գործածել իւր ձախ ձեռքը։ Թեմուրը մի երկրագործի որդի էր, բայց իւր հմտութեամբ և քաջութեամբ հասաւ բարձր աստիճանների և վերջապէս 1370 թուին, Հուսէյն էմիրին սպանելուց յետոյ, նրա տեղը բռնեց։ Մարմնի պակասութիւնը նրան չէր խանգարում 35 արշաւանքներում քանդել միևը մեսի չեւից Միջին Ասիայի պետութիւնները և իւր զօրքերի հետ միասին հասնել մինչև Գանգեսի ծայրը։ Թեմուրի մէջ միացել էին ամենահակառակ յատկութիւններ։ Թշնամիների հետ նա շատ ողերիմ էր. օրինակ, երբ Բագդադը վերցրեց, նա մահուան դատապարտց 90,000 մարդի, իսկ խաղաղ ժամանակ ամենաարդի մարդ է եղել։ Նա ունէր սէր դէպի Ճշմարտութիւնը, համեստութիւնը, պատուասիրութիւնը և խմաստութիւն օրէնքների մէջ։ Նա մեռաւ 1405 թ. փետրուարի 19-ին, իսկ նրա մահից յետոյ նրա հիմնած պետութիւնը բաժան-բաժան եղաւ։

Պետութիւնը և Հարատարակութիւնը նոյնպէս ունին իրենց Փիզիքական պակասութիւններով յայտնի ներկայացուցիչները։ Լորդ Բայրընի, անգլիացոց յայտնի բանաստեղծի մի ոտքի դասատակը դէպի ներս էր ընկած և ոչ մի բժշկական գիտութիւն չկարողացաւ բժշկել նրան այդ պակասութիւնից։ Մի ուրիշ յայտնի գրող, շոտլանդացի Վալտէր Սկոտը նոյնպէս կաղ էր, մի ոտքը մեսից կարճ լինելու պատճառով։ Մեր ժամանակակից, յայտնի երգչուհի Շարլոտտա Պատտին, որ դեռ նորերումս գմայլեցնում էր իւր կոնցերտներով ամբողջ Եւրոպան և Ամերիկան, նոյն պակասութիւնն ունէր, ոբը և զրկել էր նրան իւր քոյր Ադելինա Պատտիի պէս բեմ դուրս գալուց։

Հազիւ Թէ երկրագործի վրայ գըտնուի մի փիզիքական պակասութիւն, որ այնպէս տանջելիս լինի մարդուս, ինչպէս կուզութիւնը։ Թշուառ կոյրը զրկուած է Աստուծոյ ստեղծագործութիւնների վրայ սքանչանալու բաւականութիւնից. բնութեան պատկերները, գոյների գանագանութիւնը, աստղից երկնքի գեղեցկութիւնը, սիրելի բարեկամների պատկերները—բոլորը յաւիտեան Թաղուած են նրանից մըթութեան մէջ։ Այդ Թշուառների ուղեղն աւելի քիչ է ըմբռնում արտաքին զգացումներս։ Կոյրին կարծես Թէ պակասում է այն լուսամուտը, որի միջով կարողանար տեսնել իրեն շրջապատող բնութիւնը։ Նա օգնութեան է կանչում իւր հարուստ երևակայութիւնը և դրա օգնութեամբ ստեղծում է իւր սեփական աշխարհը։ Բայց և այնպէս կոյրերը յօրինել են անմահ բանաստեղծութիւններ, նկարագրելով բնութիւնը և մարդն իրենց գարմանալի հմտութիւններով։

Հոմերոսը, հին բանաստեղծների ամենամեծը, ինչպէս պատմութիւնն ասում է, Հնմարիա կոյր է եղել, երբ ստեղծագործել է իւր Իլիականը և Ոդիսականը, ուրեմն նրա բանաստեղծական նշանակութիւնն աւելի բարձր պէտք է դատած, որովհետև նրա բանաստեղծական տաղանդին մտաց աչքերը, այլ իւր սեփական ստեղծագործական ոգին։ Շատ հարելի է, որ բանաստեղծի Թէ անձնաւորութիւնը և Թէ նրան վերագրած կուրութիւնն առասպել է, քանի որ այդ բանը չի հաստատուում ոչ մի պատմական փաստերով։ Ներ կարդում ես բնութեան այդ գեղեցիկ նկարագրութիւնը, կրելի է եզրակացնել, որ այդ բոլորը սեփական հայեցողութեամբ չէ գրած, բայց միւս կողմից Ոդիսականի մէջ առաջ բերուած կոյր երգիչ Դեմոդոկը Ճշմարտութեան շատ մօտ է, ուստի և, այդ պոէման բացատրողները բոլորը գալիս են այն եզրակացութեան, որ միմիայն կոյր բանաստեղծը կարող էր կոյրին այդպէս նկարագրել։

Միլտոնը, մեծ բրիտանացին, որի հեղինակած «Կորցրած դրախտը» դասում է նրան աշխարհիս ամենամեծ բանաստեղծների շարքում, բոլորովին կոյր էր, երբ ստեղծագործում էր իւր այդ մեծ պոէման։ Բոլոր 12 երգերը նա Թելադրել է իւր զաւերը։ Բայց նա կուրացաւ 40 տարեկանից յետոյ, ուստի կարող էր օգտուել այն ստացուածներից, որը նա իւրացրել էր դեռ աչքերը ոպղ ժամանակ։

Պատմութեան մէջ նկարագրուած է մի կոյր զօրավարի Ժիժկիի տարօրինակ պատմութիւնը։ Մի զժբաղդ դէպքից դեռ մանուկ ժամանակ նա զրկուել էր իւր ձախ աչքից, իսկ յետոյ, Ռաքի ամբողջ պատերազմի ժամա-

ինչու նրա մասին ոչինչ չեն գրում։

—

Խմբագրութիւնս ստացել է Յ. Ֆ. Տէորժևսկու խմբագրութեամբ Թիֆլիսում լոյս տեսնող Բերանժէի երգերի ռուսերէն թարգմանութեան լիակատար ժողովածուի XI-րդ գրշիւրը, որի մէջ զետեղուած են 12 հատ երգեր։

—

Վերջին «Նոր-Դար»-ի 169 համարում խառն լուրերի մէջ տպուել է «Լոլերայի մասին» վերնագիրը, որ աւելորդ է։

ԻՆՉՊԷՍ ԱՆԵԼ.

—

Խոլերային համաճարակի պատճառով այս տարի, ինչպէս յայտնի է, ի Թիւս միւս բոլոր ուսումնարանների, մեր հայոց ուսումնարանները էլ ուշ բացուեցան.—պաշտօնապէս յայտարարուած էր աշակերտների ընդունելութիւնները սկսել սեպտեմբերի 16-ից, որ նշանակում էր ուսումն սկսել այդ թուից մի շաբաթ յետոյ, այսինքն 23-ին։

Այսպէսով ուրեմն այս տարի մեր ուսումնարաններում ուսումը սովորական տարիներից մօտ 20-25 օր ուշ սկսուեց։

Բացի այդ. այս տարի համարեա մեր բոլոր ուսումնարանները էլ նորոգութեան ենթարկուեցան՝ գլխաւորապէս ախտահան յանձնաժողովի պահանջման համեմատ։ Եւ որովհետև մեզանում երբէք ընդունուած չէ, որ ամեն բան իւր ժամանակին՝ վազօրօք կատարուի, իսկ մեր հոգաբարձուների գործն էլ սահմանափակւում է մի քանի երէցփոխներից պատրաստի գրամ վերցնելու և ուսուցիչներին ռաճիկ տալու ծանր պաշտօնով, ուստի և այդ նորոգութիւնները սկսուեցան միմիայն այն ժամանակ, երբ արդէն վազուց հարկաւոր էր ուսումն սկսել։

Այսպէսով մեր ուսումնարաններում ուսումը կանոնաւոր սկսելու գործն առնուազն մի շաբաթ էլ ետ մնաց, որով հասանք սեպտեմբեր ամսի վերջին կամ հոկտեմբերի սկիզբներին։

Չպէտք է մոռանալ, որ մենք ի նկատի ենք առնում ամենաաջող պայմանները. բայց եթէ հաշուելու լինենք հազար ու մի պատճառներ, որոնցով պայմանաւորուած է սովորաբար մեր ուսումնարանների բացումը, այն ժամանակ սիտի տեսնէինք, որ մեր ուսումնարաններում այս տարի ուսումն սկսուել է սովորականից ամիս ու կէս և աւելի ևս ուշ։

Այժմ խնդիրը է. ինչպէս պէտք է վարուեն մեր ուսումնարանական վարչութիւնները այսպիսի բացառիկ հանգամանքում՝—մի կողմից հարկաւոր է անցնել մեր ուսումնարանների ծրագիրը, իսկ միւս կողմից—դասերն ամիս ու կէս ուշ են սկսուում. Սա մի հակասական դրութիւն է, որ պէտք է տակայն լուծել։

Արդէն առաջուց կարելի է գուշակել, որ մեր ուսուցիչներից չատերը չսիտի անց կենան ամբողջ ծրագիրը՝ այդ պատճառաբանելով ժամանակի սղութեամբ։ Բայց, կարծում ենք, կը գտնուին նաև ուսուցիչներ, որոնք պիտի աշխատեն, ինչ էլ որ լինի, այդ ծրագիրն անցկենալ, ծրագիրը Թերի չթողնել։

Անկասկած առաջին կարգի ուսուցիչները պաշտօնապէս լիովին իրաւունք ունեն իրենց վարձունքն արդարացնելու։ Հօ չէն կարող 8 ամսում անցնելու նիւթը 6 ամսում անցնել։

Այդ ճշմարիտ է։

Բայց այդտեղ մի խնդիր էլ կայ, որ չպէտք է մոռանալ.—եթէ այս տարի Թերի մնայ մեր ուսումնարանների ծրագիրը, դա պիտի ազդեցութիւն ունենայ նաև յետագայ տարիների վրայ. այսպէսով ուրեմն՝ մի տարուայ պակասութիւնը զգալի պիտի լինի երկու, երեք տարի՝ և աշակերտների թուլութեամբ, մի բան, որ բոլորովին ցանկալի չէ։

Բայց միւս կողմից էլ ինչպէս պէտք է անեն այն ուսուցիչները, որոնք ցանկանում են, այսպէս թէ այնպէս, ուսման ծրագիրն ամբողջովին անց կենալ։ Այստեղ երկիւղ է ծնում, թէ մի գուցէ դրանք, այդ ուսուցիչները, որպէս զի կարող լինեն ամբողջ ծրագիրն անց կենալ, գործի բոլոր ծանրութիւնը դցեն աշակերտների վրայ՝ ընդանց ծանրաբեռնելով տանը՝ ուսումնարանական պարապմունքներով, որ նոյնպէս ցանկալի չէ։

Ահա ուրեմն խնդիրը.—հարկաւոր է անցկենալ մեր ուսումնարանների ուսման ծրագիրն ամբողջապէս, բայց այնպէս՝ որ դա չվնասէ աշակերտներին, չծանրաբեռնէ նրանց վրայ։

Սա ծանր խնդիր է, այդ պատճառով էլ հարկաւոր է, որ մեր ուսումնարանների մանկավարժական ժողովները առանձին ուշադրութեան առարկայ դարձնեն այդ։

Մեզ յայտնի չէ, թէ ինչպէս են վճռել մեր ուսուցչներն այդ խնդիրը. արդեօք գտել են հնար այնպէս անելու, որ թէ ծրագիրն անց կենան և թէ աշակերտներն առանձին ծանրութիւն չզգան, թէ պեռ չեն էլ մասնակի դրա մասին։ Մենք այդ չգիտենք։

Բայց մեզ թւում է, թէ միայն հնարեւոր միջոցներով կարելի էր այդ անել։

ա. Արդէն ուսուցիչների վրայ առանձին պարտք է դրւում տարուայ ընթացքում իրենց հանդէպ կրկնապատկելու և դասարանական պարապմունքներին աւելի ոյժ և բովանդակութիւն տալու։

բ. Որովհետև աշակերտներն երկար ժամանակուայ հանգստութեամբ բաւական ոյժ են հաւաքել ամբողջ տարուայ համար, ուստի, որպէս բացառիկ տարուայ բացառիկ երևոյթ, արձակուրդները՝ Ծննդեան և Զատկի՝ փոխանակ երկ-երկու շաբաթ անելու, միայն մի շաբաթ անել։ Սակայն այդ դէպքում ուսուցիչների վրայ առանձին պարտականութիւն է դրւում ամբողջ տարուայ ընթացքում աշակերտների խաղերին ընդհատք և առանձին ոյժ տալ։

գ. Տարուայ վերջին հարցաքննութիւնները վերջացնել և աշակերտներին յաջորդ դասարան փոխադրել միմիայն տարեկան թուանշանների։

Ի հարկէ, ցանկալի էր, որ մեր ուսումնարանական բարձր վարչութիւնները մի որ և իցէ կարգադրութիւն անէին այդ մասին. բայց և այնպէս յոյսը մնում է դարձեալ մեր ուսուցիչների համեստ ոյժերի վրայ։

Թող դրանք յայտնեն գոնէ իրենց կարծիքները՝ ինչպէս անելը։

Մ ի հ ր ա ն.

—

ՀԵԹԱՆՈՍԻՐ ԿԱՄ ՔՐԵՏԱՅԻՐ

—

Շատ անգամ է մամուլի մէջ խօսք եղել, հայրենի հնութիւնները պահպանելու և նորանոր հնութիւնները երևան հանելու կարևորութեան մասին, բայց մինչև այժմ մեր հասարակութիւնը չատ մութը գաղափար ունի հնութիւնների կարևորութեան մասին։ Ժողովուրդը մինչև այժմ էլ չէ կարողանում ըմբռնել, թէ ինչ արժէք կարող է ունենալ մի խեցի, մի օղակ, մի տէգի կտոր կամ մի սեպաձև արձանագրութիւն. եթէ վերջին տարիներս հնութիւնն արժէք է ստացել հասարակութեան աչքում, այդ էլ այն չափով է, որքան որ հնչուն դրամ արժէ գտնուած հնութիւնը կամ կրօնական սըրբութեան նշանակութիւն է ստացել։ Որ հասարակութիւնը դեռ չէ հասկանում հնութեան նշանակութիւնը՝ դրան հազարաւոր ապացոյցները կան, որոնցից մէկը՝ գոյութիւն ունեցող հրնութիւնների անխնամ թողնուիլն է, մեսն էլ այն երևոյթն է, որ հասարակութիւնը հնութեան վերաբերեալ ոսկեղէնը կամ արծաթեղէնն անմիջապէս ձուլել է տալիս կամ ծախում ոսկերիչների վրայ։

Ամենից ին կարիք չկայ ցոյց տալու հնագիտական առարկաների մեծ նշանակութիւնը, բաւական է ասել, որ չատ անգամ մի չնչին համարուած առարկայ բաւական է լինում մի ամբողջ պատմութիւն երևան հանելու։

Դրա ամենափայլուն ապացոյցներից մէկն է նաև Քետացոց պատմութիւնը, որի մասին «Արևելեան»-ը հաղորդում է. «10—12 տարի առաջ դեռ ոչ ոք մտքէն կ'անցընէր թէ, Արևմտեան Ասիոյ մէջ երբեմն հզօր պետութիւն մը կար, որ Եգիպտական և Ասորական զօրութեանց դէմ յաջող պայքարներ մղած, Բաբելոնացոց ու Հռոմէն աւելի երկար չրջան բոլորած ու Ներսպական քաղաքակրթութեան առաջին տարերքն հայթայթած էր։ *)

Հնախօսական քննութեանց և բազմատարի հնութիւնների հետազօտութեանց շնորհիւ, այսօր ապահովապէս կրնանք ըսել թէ Հեթացիները, Քրիստոսէ առաջ 19-րդ դարէն մինչև 7-րդ դարն, ամբողջ 1200 տարի Արևմտեան Ասիոյ ժողովրդոց բոլորը վարած են։ Նգհան (Աշխարհագրոսի) ծովէն մինչև Եփրատ ու Նէքսինեան (Սեւ) ծովէն մինչև Նէոս տարածուած էր Հեթական գերիշխանութիւնը։ Պատմական նշանաւոր անցքերը—Եգիպտական հարստութիւնները յաջորդութիւնը, Աբրահամու գաղթումը, Թաւթի և Սողոմոնի փառաւոր օրերը, Ասորական յաղթութիւնները, Տրոյական պատերազմները և ևն և ևն—ամենն ալ տեղի ունեցած են Հեթական ազգի գոյութեան և գերակշռութեան պահուն, սակայն յոյժ զարմանալի է որ պատմութիւնը կատարեալ լռութիւն կը պահէ անոնց նկատմամբ։

Արդարև Ասուանճաչունչի մէջ տեղ տեղ կը պատահինք «Քետացի»ներուն, երբև Քանանու երկրին աննշան ժողովրդոց մին։ Սակայն, Մաքսիմեալի այդն Աբրահամին ծանօթով, երբեմն Իսրայելացիներէն յաղթուելով, Սրրահեցիներու հետ վաճառականութիւն մշակելով, Ուրիայի կնոջ միջոցաւ Թաւթի խնամին լինելով և ուրիշ այսպիսի մանր մունր դէպքերով **) ճանչուած սկսը տեղի մը համարյնով մրսքէն կ'անցընէր ըսել թէ «անոնց պատմութիւնը գրել՝ աշխարհիս կիսոն պատմութիւնը գրել կը նշանակէ»։

Երբ Նեղոսի հովտին չիշատակարանները պարզաբանուեցան, հասկացուեցաւ որ Եգիպտոս երբեմն ունեցած էր ահարկու թշնամի մ'ալ, որ Քետացի ժողովուրդն էր։ Եգիպտական 12-րդ հարստութեան առաջին Փարաւոնին օրէն մնացած—3092 տարուան—կոթողի մը վրայ՝ չիշատակուած են Եգիպտոսի սահմանակից բազմաթիւ հեթական քաղաքներ ու մեհեանններ։ Մարիէդ կը կարծէ թէ Եգիպտոսի Հիւքսոսներէն «Նիւրատուցոց» գաւառին (Այնթափի շրջակայից) Հեթական նոր քաղաքներ հնութեանց վրայ կարևոր տեղեկութիւններ տուած էր։

**) Տես ծննդ. ժ. 15։ ժե. 20։ իգ. իե. 9. 10։—ել. գ. 8։—Յես. ժ. 10։—ի. թագ. ժգ. 3։—գ. թագ. թ. 20։ ժ. 29. և ևն և ևն։

---

*) «Մասիս» օրաթերթին մէջ հրատարակուած (1882-ին) Թղթակցութեամբ մը հաղորդուած էր թէ Կեդր. Թուրքիոյ Գոլէձին մէջ, Անգլիացի Տօքթ. Կուիթըը օվ Թօրքուէյ «Էքչըը» մ'արտասանելով «Նիւրատուցոց» գաւառին (Այնթափի շրջակայից) Հեթական նոր քաղաքներ հնութեանց վրայ կարևոր տեղեկութիւններ տուած էր։

նակ (1421 Ք.), ապեղն նեռը զրկեց նրան և աչ աչքից. բայց և այնպէս նրա զօրքերը չհամաձայնուեցին, որ կուրացած Փիժիկը հեռանայ ասպարէզից։ Պատերազմը սկսելուց առաջ նա հրամայեց իրեն նկարագրել դաշտի դիրքը և դրա համաձայն դասաւորեց իւր զօրքը։ Նա շատ քիչ էր սխալւում իւր հաշիւների մէջ և համարեա միշտ յաղթող էր հանդիսանում։

Տրագի-կոմիքական ստատուրութիւն է Թողնում մարդու վրայ դրամատիքական կոյր դերատան Լուի Ջոատոնը, որը Վիչենցիայի բեմի վրայ, Սոֆոկլեսի ողերգութեան մէջ, կոյր Էդիպի դերն ամեն անգամ աւելի ու աւելի աջողութեամբ էր կատարում։ Այստեղ ռեալականութիւնը մեզ մի փոքր հեռու է տանում և, միշտ հեռու ոչ լինելու համար, մենք պէտք է պահանջէինք, որ Ամենատպէն ծերի դերը «Վիչենցի Թեատր» կոյր դերասան կատարէր «Թրեզիոզում» Պեդրոյի դերը կատարելիս դերասանը կտրած լինէր իւր ոտքը և փայտէ ոտք գործածէր, դերն աջողութեամբ և էֆֆեկտով կատարելու համար։

Թուլ երաժիշտը պակաս զարմանալի բան չէր քան կաղ ղօրապետը, նոյնպէս մի ոտքանի պարոցը և կամ կոյր դերասանը։ Բայց և այնպէս մեծ երաժշտագէտ Բեթհովէնը իւր կեանքի վերջին տարիներում բոլորովին խուլ էր։ Որքան առատ գիտութիւն, որքան երաժշտական ոյժ պէտք է ունենայ մի երաժշտագէտ, որ կարողանայ առանց մի ձայն լսելու, դասել իւր հրաշալի սիմֆոնիայի ձայները գեղեցկութեան մասին։ Զարմանալի է և Լսաժի խլութիւնը, որի «Կարսատանա» և «Ժիլ-Բլազ» երաժշտական հեղինակութիւնները թարգմանուած են համարեա բոլոր լեզուներով։

Կան մարդիկ, որոնք աչքի են ընկնում իրենց առանձին արտաքինով, իսկ երբեմն էլ զարմանալի ագեղութեամբ։ Հռոմի Եւեւելի բանաստեղծ Օվիդիոսը մի այնպիսի զարմանալի երկար քիթ ունէր, որ նրա անունը դրել էին «Noso»։ Հռոմի պատմարան Տիտոս Լիվիոսի և յունաց իմաստուն Սողոնի երեսի այդ մասը նոյնպէս բաւական զարգացած էր։ Աւելի ևս զարմանալի քիմով աչքի էր ընկնում Ֆրանսիացի գրող Բերժերը, որ ծնուել էր 1720 Ք.։ Առաջ նա արքայական գվարդիայի սպայ է եղել, բայց ստիպուած էր Թողնել իւր ծառայութիւնը, որովհետև ընկերները միշտ ծաղրելիս են եղել նրա քիթը։ Խեղճն այդ պատճառով հազարից աւելի մենամարտութիւններ է ունեցած, և որովհետև միշտ էլ պատրաստ է եղել կռուելու, նրա անունը դրել էին «Le demon de bsovoure»։ Շիլլերի քիթը նոյնպէս բաւական երկար էր։ Մովսէս Մենդելսոն փիլիսոփան և Մենդելսոն-Բարթոլդի երաժշտագէտը, ինչպէս և հրէական ցեղի մեծ մասը, առատ են պարգևատրուած այդ կողմից։ Նշանաւոր կանանց մէջ առանձին մեծ քիմով յայտնի են՝ Անգլիայի Թագուհի Եղիսաբէթը, Պոմպադուր մարքիզուհին, Մարիա Թերեզան և Նիկատերինէ II կայսրուհին, Ընդհակառակը, Ճլուտած, փոքրիկ քիմով աչքի էին ընկնում յայտնի յունաց իմաստուն Սոկրատեսը և Թեմոսթենեսը, յունաց մեծ հռետորը, որը միևնոյն ժամանակ կակազ էլ էր։

Ցայտնի է, որ Ֆրանսիացի փիլիսոփա և գրող Վոլտերը ծերութեան ժամանակ չատ տգեղ է եղել։ Մէկ անգամ նա ճանապարհորդելիս է եղել Ֆրիդրիխոս Մեծի հետ։ Թագաւորը նստած է եղել առաջին կառքում, Վոլտերը՝ երկրորդ։ Երբ նրանք ձիերը փոխելու համար կանգ են առնում մի փոքրիկ դիւղում, մանկլաւիկներից մէկը, որ անպատուած էր այդ մեծ փիլիսոփայից, դէպքից օգուտ է քաղում և կամենում է իւր վրէժն առնել։ Նա հաւաքած գիւղացիների և գիւղի երեխաների մէջ լուր է տարածում, Թէ իբր երկրորդ կառքում նստած է Թագաւորի պատրատական կապիկը։ Գիւղացիները խոյոյն շրջապատում են կառքը և սկսում են ծաղրել ամեն կերպ և բարկացնել Վոլտերին։ Խեղճը գոռում, բարկանում և իզուր աշխատում է հեռացնել իւր մօտից ամբոխին։ Բայց, որովհետև Վոլտերը գերմաներէն մի բառ անգամ չէր հասկանում, իսկ Ֆրանսիական լեզուն էլ գիւղացիներին էր, անհասկանալի, ուստի Ֆրանսերէնի անհասկանալի հընչիւնները գիւղացիներին աւելի էր հաստատացնում, Թէ Ճիշտ որ նա կապիկ է։

ՍՒՆԵԼԱՊԵՏՆԵՐԻՑ ՄԷԿԸ ՎԵՐՋԱՊԷՍ ԱԶԱՏԵՑ ԼԱՂՃԻՆ ԱՅԴ ԱՆՏԱՆԵԼԻ ԴՐՈՒԹԻՒՆԻՑ, և ԵՐԲ ՎՈԼՏԵՐՆ ԽՄԱՑԱՒ, ՈՐ ԱՅԴ ԲՈԼՈՐԸ ՄԱՆԿԼԱՒԻԿԻ ՉԱՓ ՀԱՆԱՔՆ Է ԵՂԵԼ, ԼԱՂԱԳԻՆ ԳԱՆԳԱՏՈՒԵՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ։

—Ի՞նչ անեմ ես, ինչպէս դրան պատժեմ, հարցրեց Ֆրիդրիխոսը։

—Ձերդ մեծութիւն, գոչեց վիրաւորուած փիլիսոփան,—հեռացրէք դրան ձեզանից։

Թագաւորը, որին չատ զուարճացրել էր այդ անցքը, խնդոյն կատարեց իւր գիտնականի կամքը և մանկլաւիկին նշանակեց սև հուսարների գնդի լեյտնանտ։

Ֆրանսիայի յեղափոխութեան հերոսներից ամենայայտնին, Միրաբոն, միայն իւր հերքիւլեսեան կազմուածքով չէր աչքի ընկում, այլ և տգեղութեամբ։ Բայց այդ բանը չէր արգելում նրան կանանց սիրելին լինելուց, որովհետև նրա խելքը, չարժուածքը և քաղցրախօսութիւնը ծածկում էին արտաքին տգեղութիւնը։

Կարճ հասակը նոյնպէս չէր արգելում չատերին յայտնի պատճառներ վարելու, սկսած V դասի յոյների Թագաւոր Աքիլլեսից, Ֆրանկների Թագաւոր Պիպինը, Կարլոս Մեծի հայրն էր, անուանում էր «կարճիկ»։ Նապոլէոն առաջինին զինուորները անուանում էին «փոքրիկ կապրալ»։ Վասկո դը-Գամայի հասակը նոյնպէս չատ կարճ էր, բայց նա հոգով հարուստ էր։

Հիւանդութիւնն անգամ չի կարող կանգնեցնել ուժեղ խելքի մտածմունքները Թուխքը։ Հենրիկոս Հէյնը երբ ծանր հիւանդ էր և լինում տարի չարունակ անկողնին էր ծառայում, չարունակում էր իւր լաւագոյն երգերը գրել, Թէև դրանց հետ միասին երբեմն դուրս էին գալիս և նրա Թուլնաւոր հեղինակութիւնները։ Շիլլերն երկար ժամանակ տանջւում էր հիւանդութիւնից, որը վերջապէս կոտրեց նրան, բայց հիւանդութիւնը չէր ազդում նրա բանաստեղծութիւնների վրայ։

Դժուար է Թուել այն բոլոր օրինակները, երբ հոգւոյ հաստատութիւնը և կամքն ոյժը յաղթող են հանդիսացել տկար մարմնի Թուլութեանը։

Քիչ չեն և այնպիսի օրինակները, երբ ոգին ընկճուել է ֆիզիքական և բարոյական տանջանքների ծանրութեան տակ։ Լենաուն և Հելդերլինը ցնորուեցան, Լուիզա Բրահմանը և Հենրիկոս Կլէյստ անձնասպանութեամբ վերջ տուին իրենց կեանքին։ Նրանք այնքան ոյժ չունեցան, որ կռուէին բաղդի հարուածների հետ և կորան կեանքի կռուի մէջ։ Բարերաղթաբար սոյնանման օրինակները չատ քիչ են պատահում և ոգին մեծ մասամբ իւր համար ճանապարհ է գտնում մարդուս գործունէութեան բոլոր ճիւղերում, յաղթելով ամեն արգելքներին, որ ստեղծում է նրանց Թշնամի բազդ։

Ա. Տէր-Ղև.

սոսները, այսինքն «Հովիւ» թագաւորները հեթանոս ցեղէ էին։ Տակիտոս կըսէ շատակէ Քարնաքի (յեգիպտոս) մեհեանէն արձանագրութիւն մը, զոր կեսար կարդալ տուած է և որ կըպատմէ եղէր Թուդմէս Գ.-ի պատերազմը՝ Քհատացւոց դէմ (1600 Ն. Ք.)։

Եգիպտական գիւցազներգակ բանաստեղծ մը,—Պենտաւր, որ հնուքեան կարգով աշխարհիս երկրորդ քերթողն է, Ճակատամարտի մը դէպքերը կըպատմէ։ Ռամսէս Բ.-ի իշխանութեան հինգերորդ տարին (1383 Ն. Ք.), եգիպտացիք արշաւեցին մինչև Քատէշ քաղաքը (Որոնդէս գետին վրայ, ի Սուրիա), Քետացիք ծովեզրի աւազին պէս անհամար էին և իրենց հեռաւոր նիզակակիցներն օգնութեան կըհասնէին։ «Մինչև ցայնժամ այնպէս բանակ չէր տեսնուած։ Անոնց զօրքերը մարախի նման կըվխտային լեռներուն ու ձորերուն վրայ»։ Անոնք, Քատէշի մօտերը գտնուած էին ու յանկարծ թափեցան Եգիպտացւոց վրայ։ Ռամսէս պաշարուեցաւ 2500 կառքերու մէջ, իր բոլոր մարդիկը փախան։ Այս ճգնաժամուն մէջ Փարաւոն (Ռամսէս) յօգնութիւն կոչեց իր Ամմոն Աստուածը.—«Ո՛ւր ես, ով հայր իմ Ամմոն,—Ինչո՞ւ կըլքանես զիս. մինչ անհնազանդ գտնուեցայ, ահա ամենը Թոզին զիս և ես անօգնական եմ... քու պաշտպանութիւնդ միլիոնաւոր մարդոց օգնութիւնէն գերազանց է... դու՛ զանազանէ այս ալիդ ազգը...»։—Ամմոն լսեց իր որդւոյն աղօթքը և օգնութեան հասաւ։ Ռամսէս յանկարծ գազ մը կոսեցաւ իր ամրոզ անդամներուն մէջ, ու սկսաւ հզօր գնդապետութիւն մ'ընել։ Թշնամիները ետ նահանջեցին, վերջապէս՝ հաշտութիւն գոյացաւ և դաշնագրութիւն մը կնքուեցաւ։ Ի նշան սիրոյ Հեթանական վեհապետին գուստրը հարս տրուեցաւ Փարաւոնին։ Հեթացի Սամենիկն ալ յոյժ գեղանի էր։ Եգիպտացիք գինք անուանեցին Ուր-Մաա Նօֆէրու-Բա Նոր հարսին հայրը, Քետա-Սիրա, իր ազգային գգեստով այցելութիւն մ'ըրաւ Եգիպտոս։

* * *

Բայց միայն Եգիպտոսի պատմութիւնը չէ որ երևան հանեց Հեթանական կորսուած ազգը։ Ասորական հնութիւնք ալ նորանոր յայտնութիւններ կ'ընեն անոնց մասին։ Նինուէի և Բարիլոնի աւերակներէն գտնուած կաւէ տախտակներուն մէջ բազմահատոր գրքերու բաւական նիւթեր կան։ Ասոնց մէկը պարզաբանելով՝ Մր. Բինչես կըհաստատէ որ «մեզի ծանօթ Թուրանեներէն շատ առաջ Ասորեստանի պետութիւնը չէր ծնած, Հեթական զօրաւոր ժողովուրդ մը կար, որ հին քաղաքակրթութեան առաջին կարը կըկազմէր»։

Սենեքերիմի բնակավայրին աւերակաց մէջ (ի Քույունճուղ) Սըր Հ. Լէյարտ կաւէ կնիքներ գտած էր, որոց նշանագրերը ասորականէն տարբեր էին, հիմա կըընդունուի որ անոնք հեթական հնութիւններ են։

* * *

Ասորական ազգին արձանագրութիւններէ առնուած մի քանի դէպքերը կարժէ յիշել աստ։

Թագզաթփաղասար Ա. (1110 Ն. Ք.) հիւսիսի անառիկ լեռներէն կանցնի մինչև Մեդիտենէ. կըբռնէ Քիլի-Ադէրու նշանը՝ որ Մոսիկեաններու գլուխն անցած և սիրացած էր Ազգի, Բուրուքուզդի և Գումմուք երկրներուն (Գումմուքի այսինքն Գոմաղենէի հարաւակողմն է այժմեան Մարաշ քաղաքը)։ Վերջը պաշարեց «Ուրքամեան» նեղուց բերդը, որուն տէրը Սամի-Անդէրու հեթացին, իր տաքն ինկաւ։ Ուրումազի «հեթական գինուորը» կոչուած բնակիչք (հիւսիսային Միջագետքի մէջ) իրեն հպատակեցան։ Թագզաթփաղասար ուրիշ անգամ մալ արշաւեց ի Մելիտենէ, բայց չկրնաց «անոր վրայ գէթ ալով»։ Ջայջոզեցաւ անցնիլ Եփրատէն։ Անոր անցքը պահպանուած էր Քարքեմիշ քաղաքին զօրաւոր դիրքով։ Ասուր-Նազիր-Բալ (885—860 Ն. Ք.) Նուաճէց Գումմուքի երկիրը, Եփրատէն անցաւ և յարձակեցաւ Քարքեմիշի վրայ։ Հեթական Թագաւորը Սանկարա ընծաներով դարձուց զայն։ Անկէ անցաւ Հալէպի մօտ Ազազ քաղաքը, որուն ժողովուրդը Աֆրին գետէն մինչև Աճահօքի լիճը, հեթական ցեղէ էր։

Սարմանասար Բ. (860—825) նոյնպէս արշաւեց Հեթացւոց վրայ։ կուգէր Եփրատէն անցնիլ և Միջերկրականի վաճառականութեան տիրանալ։ Ամանոս լեռանց (Ձէյթլի Պէրդէքէմ) մայրիներով իր Ասորեստանի պալատը շինեց։ Քարքեմիշի Թագաւորը հեթացի դաշնակիցները լմբած էր Փոքր Ասիոյ ամեն կողմերէն, բայց յաղթուեցաւ և ընծայներով ամոքեց անոր բարկութիւնը։ Սարմանասար՝ Հալէպի մէջ ազգային Աստուծուն, Հատատ-Ինիմմոնի զոհ մատույց։ Սարգոն Թագաւորն էր որ (717 Ն. Ք.) բռնեց վերջապէս Քարքեմիշի Թագաւոր Բիսիբիսը։ Այսպէս ինկաւ հեթական պետութիւնն ու յաղթանակեց Սեմական ցեղն ի Սուրիա։ Հեթացիք հետզհետէ դարձան հիւսիս, իրենց բնակավայրերը։ Փոքր Ասիոյ մէջ, Ալիւս գետի ափանց և արևելեան լերանց մէջ Հեթացիք 200 տարի ևս ընդդիմացան Ասորեստանի։

* * *

Վերջին տարիները, կարճ չափելիան գիտեր եղան հեթական ազգին նըկատմամբ։ Պիտանակնք պիտի յայտնէին վերջապէս նոյն իսկ հեթական ապրիւրներէն ամրոզջացնելու հեթական պատմութիւնն, որովհետև օտար աղբիւրները ոչ միայն բաւական չեն, այլ և մերթ ճշգրիտ չեն։ Այս խնդրոյ վրայ մեծագոյն հետևնակութիւնն է այսօր՝ Բրոֆ. Սէյս, որուն մէկ գործը Ֆրանսերէնի ալ թարգմանուած է։ Իսկ աւելի ընդարձակ կրնասի Բրոֆ. Գամպէլ, իր երկհատոր հրատարակութեամբ։ Հեթական նշանագրերուն և պատկերներուն, եգիպտական ու ասորական հնութիւններուն, ազգաց աւանդութիւններուն և հին ու նոր լեզուներուն բաղդատութեամբ՝ Բրոֆ. Գամպէլ կ'եզրակացնէ թէ հեթացիք առաջնակարգ գործունէութիւն մուծեցած են տոհմիկ հին քաղաքակրթութեան մասին։ Ցուճական դիցաբանութեանց և կրօնից վարպետ, և Ամազոն կոչուաց պատերազմիկ քրմուհիներու ցեղին ծնողն իրենք եղած են։ Եւրոպա անցնելով՝ Իլիրիոյ, Իտալիոյ, Սպանիոյ, և Բրիտանիոյ մէջ յիշատակները թողած են։ Հեթական ցեղէ էր այն ժողովուրդն որուն վրայ հիմնուեցաւ աւելի արիական հաստատութիւնը։ Կիւրոսի ձեռքով՝ հեթացիք ցրուած են մինչև Հնդկաստան, և Քրիստոնէութեան առաջին Թուականներուն՝ մինչև Թուրքաստան, Սիպերիա, Չինաստան, և ցարդ իրենց սերունդը կապրի ի Քորէա և ի Ճաբոն։ Հեթացիք հիւսիսային Խաղաղական Ովկիանոսէն ալ անդի անցած և ցրուած են Ամերիկա, Ալասքայէն մինչև Մեքսիկոյի ծոցը և հիմած են Ազտէքներու հին տեղը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽԱՉԱԿԱՊ գիւղ (Գանձակի նահանգ), 17 հոկտեմբերի.—Գանձակի վիճակի Բանանց գիւղի սուրբ Թարգմանչաց վանքը հիմնուած է հինգերորդ դարում սուրբ Թարգմանիչների ձեռքով և գտանուում է Բանանց գիւղի հանդէպ՝ մօտ 2 վ. հեռաւորութեամբ ընկած է մի ձորակի մէջ, որը յայտնի է իր վտառուր անցեալով Թէ Բանանցեցիներին և Թէ հարևան գիւղացիներին։ Դա 30-ական Թուականներում (սրանից մօտ 62 տարի առաջ) ունեցել է իւր մեծագործութիւնը, բաղկացած 8—10 հոգուց, որի վանահայրն եղել է բանանցեցի Սահակիանոս վարդապետ։ Բանանցիք վերջինիս օրով վանքը բաւական ծաղկած դրութեան մէջ է եղել Թէ կալուածական և Թէ նիւթական կողմից և ունեցել է իրեն համապատասխան մեծ հարստութիւն, այն է 80—90 օրավար վարելահողեր, որոնք մշակուելիս են եղել վանքի սեպհական 8 զոյգ եզներով։ Ունեցել է նաև մի այգի, բնագործակ և խոտ անասուն, կովեր, ջորիներ և չատ մեղուներ։ Այդ միաբանութեան Թւում է եղել և տեղացի Տէրունց Գաբրիէլ եպիսկոպոսը, որը իւր կողմից քիչ հոգ չէ տարել համերաշխութեան պահպանելու վանահանների մէջ։ Արդարև վանահայրը Սահակիանոս վարդապետն իւր հսկողութեան ներքոյ ունենալով աշխատասէր միաբաններ, յամենայն դէպս ջանք է արել բարեկարգելու Թէ այդ ազգային մենաստանը և Թէ նըրա կալուածքը։ Նեղել է տուել վանքին կից մի քանի լացանման սենեակները միաբանութեան համար, երկար սեղանատուն, ցորենի չամամարան և այլն։ Բանանցի սուրբ Թարգմանչաց վանքը, չնչած Թուանահաններում, ունենալով իւր փառաւոր պատկերը Թէ ներքին և Թէ արտաքին կողմից, մինչև անգամ հարևան գիւղացիների և վանականների բարի նախանձն է չարժէր։ Բայց վանքն էլ քիչ չէ նպաստել գիւղացիներին սուվի ճգնաժամերում։ Մերուներն ոգևորուած այսօր էլ պատմում են, որ մի քանի Լուսը յաջորդող երաշտ տարիները, երբ գիւղացիք զբաղուում էին իրենց ցանքերից, այդ տագնապի ժամանակ, միայն վանքի ցորենի չամամարանը, գինու կարասներն ու գանազան մրգեղէնով լիք մառանն է լինում, որ բացուում է նրանց առաջ Սահակիանոս վարդապետի ձեռքով, որ և պահպանուում են սպառնացող սովից, Թէ լինչ միջոցներով է ձեռք բերում վանքն իւր հարստութիւնը, այդ ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս նրա անցեալում ունեցած կալուածքը։ Այսքանը բաւական համարելով անցեալն մասին՝ գանանք ներկայ վիճակին։

Այս ազգային մենաստանը, որ ինչպէս ասացինք, հիմնուած է հինգերորդ դարում սուրբ Թարգմանիչների ձեռքով, այժմ քայքայուած, ամայացած է։ Ինչպէս ասում են, վերջին ժամանակներս գրկուել է և իւր կալուածքից, չունենալով պարսպից զուրս ոչինչ՝ չնորհիւ մի քանի գիւղացիների։ Վանքն այժմ ունի միայն մի այգի, որի մէջ որթերը վաղուց է վեր վչացել ու անհետացել են։ Նրա 10-ի չափ սենեակները, սեղանատունը և չամամարանը սրանից վերջ Թէ՛ առաջ ծառայում էին գիւղի անասուններին գոմի տեղ. գրանք վերջերս գործ են դրել և իւրաքանչիւր այցելող՝ հեռանում էր մի տեսակ տխուր տպաւորութեան տակ։ Ազգային այս բազմադարեան սրբավայրը գրկուելով իւր զանազան միջոցներից ու չքեղութիւնից, գրկուել էր և մինչև անգամ մի վանահօրից։ Բանանցեցիները նոր զգալով իրենց վանքի անչուքութիւնը, անմխիթար դրութիւնը, անցեալ սեպտեմբերից հրաւիրել են վանահայրու-Թեան պաշտօնով Սեանայ անապատի միաբան արժ. Գէորգ վարդապետ Տէր-Յովհաննիսեանցին։ Վանքը բոլորովին զուրկ է իւր նեբքին զարդերից, չունի գոնէ պատարագչի զգեստ և ոչ եկեղեցական գրքեր. ունի մի հատ ատենի ժամագիրք, որի տառերը խաշրացոյցի տակ կարելի է ծիւսն որոշել, այդ իսկ պատճառով պատարագ էլ չէ մատուցւում վանքում։ Վանքը ոչ մի հասոյթի ապրիւր չունի, գրա համար էլ այժմեան վանահայրը գրկուած է միջոցներից և ապրում է չատ ադքատիկ ու Թշուառ վիճակի մէջ, մինչդեռ նա ունի իւր հետ և որդի, ուրեմն օգնելու կարևորութիւնը մեծ է, Բանանցեցիների ուշադրութիւնն հենց հրաւիրում այդ քանի վրայ։

Մ. Եպ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՐԼԱՆԴԱՅԻՔ

—

Եւրոպական կեանքի մէջ երբեմն այնպիսի խնդիրներ են յուզուում, որ ընդհանուր հետաքրքրութիւն են զարթեցնում ոչ միայն այդ խնդրով ըզբաղուած հասարակութիւնների, այլ և շատ հեռաւոր ազգերի մէջ, ազգերի՝ որոնք անմիջական նեղ կեանքից ուելի հեռու տեսնելու ընդունակութիւն ունին, որոնք հեռաւոր ազգերի կեանքի երևոյթների մէջ էլ որոնում են այն ընդհանուրը, որ սեպհական է ամեն մի մարդ արարածի, որով զգում են, Թէ մի են...

Վերջին տարիներս այդպիսի հետաքրքրութիւն պատճառող խնդիրը է իրլանդական խնդիրը։

Արդէն տասնեակ տարիներ է, որ լուսաւորուած աշխարհը լարուած ուշադրութեամբ հետևում է այդ խնդրի ստացած բոլոր փոփոխութիւններին. հետաքրքրութեամբ դիտում է այդ փոքրիկ ժողովրդի՝ իրլանդացիների առնչութիւն՝ անհատ մարդաւորի մի զօրեղ և քաղաքակրթութեան բարձր աստիճանի վրայ կանգնած ազգի հետ, ինչպիսին է Անգլիան։

Մեզ համար էլ հետաքրքիր է այդ խնդիրը, մենք էլ մի երկու բան կըգանենք նրա մէջ մեր սրտին մօտիկ և խրատիչ, ուստի հարկաւոր է, որ մենք էլ մօտից ծանօթանանք այդ հաչտածուած ժողովրդի վիճակին։

Աղքատութիւն, ընդհանուր, համատարած աղքատութիւն—ահա իրլանդիայի իսկական պատկերը մի խօսքով անփոփուած։ Մեռելութիւն, անմարդաբնակութիւն, անապատ—այսպիսի տպաւորութիւն է գործում մարդու վրայ իրլանդիան։ Դիւղերի բացակայութիւն. գրանց տեղ միայն կիսա-կիսատ տներ, այսինքն որջերի նման շինուած աղքատիկ խրճիթներ են երևում, որոնց մէջ խոզն ու տագր, վախ եզն ու ախրը միասին ապաստան են գըտնում գիշերները։ Վարսակ ու գետնախնձոր՝ ահա իրլանդացու կերածը—այդ էլ Թէ՛ միայն ուենալու. ծուխիծուխ եղած զգեստ—ահա շորը։ Մարդիկ մահ են գալիս—կարծես ուրուականները լինին—ոչ խանդ, ոչ աշխուժութիւն՝ գանգատկոտ, կեանքից զըզուած։ Ամեն մի քաղաքակրթի երկրում անասուններն աւելի լաւ են ապրում, քան Թէ իրլանդացիք։ Իսկ կենսական պիտոյքները—շորը, քնարանը, կահ-կարասիքը, գործիքներն այն կերպարանքն ունին, որ նոյն իսկ ամօթի կըբերէր ամեն մի վայրենի ժողովրդի։ Ամեն տեղ անասրբութիւն, ամեն տեղ անկոգութիւն, կեղտ։

Բայց լինչի է Իրլանդիան այսքան խեղճ, լինչի են իրլանդացիք այսպէս աղքատ։ Երկիրն է անբեր, Թէ՞ իրենք են ծոյլ։

«Ծովերի մարգարիտը», «գմբուխտ կղզին», աշխարհի հրաշալի ծաղկոցը», «ովկիանոսի գեղը», «կանաչ էրինը»—Իրլանդիան աղքատ չէ բնութիւնից։ Հնմարիտ է, նրա $^1/_3$ մասը ժայռերով, լճերով և ճահիճներով է պատած, $^1/_3$-ը միջակ պարարտութեան հող է, մայց մնացած մասը—գրեթէ է. «ը—միատեսակ՝ ոչ ցուրտ է և ոչ շոգ, հողը պարարտ, հարուստ սև մասեան տիպը՝ մշտատև գարուն է։ Երկրին ներսում մեծամեծ լճեր կան։ Ջանները, որ Թէ՛ լիճ և Թէ՛ գետ է։ Համարեա ամբողջապէս արևմուտքից արևելք երկու կէս է նում երկիրը և ամբողջովին ճաւագնաց է։ Միւս գետերն էլ մեծ նաւարկութիւններին ունին։ Արտաքուստ էլ նոյն յարմարութիւնները—Իրլանդիան գանուում է Եւրոպայի և Ամերիկայի միջև՝ Անգլիայի ածխահանքերին մօտիկ։ Ատլանտեան ովկիանոսն ու Մանշը ամէն կողմից պատում են այդ երկիրը և բազմաթիւ նաւահանգիստներ կազմում, որոնցից ոմանք, ինչպէս Կորկի նաւահանգիստն, այնքան ընդարձակ են, որ ամբողջ Եւրոպայի նաւատորմիղը կարող են իրենց ծոցում ամփոփել։

Այսպիսով ուրեմն, ոչինչ արգելք չկայ երկրին առաջադիմելու յաջող պայմաններին մէջ լինելու համար։

Գուցէ յանցանքը ժողովրդինն է։

Նկատեցինք, որ իրլանդացիք ծոյլ են, կիպտոտ և այլն։ Այդ Ճշմարիտ է։ Բայց Ճշմարիտ է նաև այն, որ նոյն իրլանդացիք գաղթելով դէպի Ամերիկա, դառնում են գործունեայ, ժիր, աշխատասէր և մեծ ընդունակութիւններ են ցոյց տալիս գիտութեան և կեանքի բոլոր ճիւղերի մէջ, բոլոր աստիճաններում։

«Իրլանդացին,—ասում է մի ամերիկացի նշանաւոր գրող,—աշխարհիս ագգերից ամենածոյլն է, բայց իր հայրենիքում կրած ադքատութեան, տիֆի և սովի պատճառով Ամերիկա ընկնելով, նոյնքան աշխատասէր, նոյնքան լաւ քաղաքացի է դառնում, ինչպէս և բուն Ամերիկացում ծնուող ամեն մէկը։ Ծուլութիւնն իրլանդացիների մեղքը չէ. մի անգամ որ Անգլիա կամ Ամերիկա են ընկնում—ամենաաշխատասէր մարդիկն են դառնում նրանք»։

Մի ուրիշն ասում է. «Ամերիկայում իրլանդացիներն անընդհատ գործում են, առաջ գնում, լաւացնում են իրենց դրութիւնը։ Ամեն ասպարիզում էլ այդի են ընկնում նրանք. նրանք յայտնի են, որպէս վաճառական, որպէս գործարաններատէր, բանկիր, վաստակաւոր, բժիշկ, ինժիներ-ճարտարապետ, գիւտերը անող, հրապարակախօս, արուեստ, ուսուցիչ, գիտնական. յայտնի են որպէս իմաստուն մարդիկ խորհրդի մէջ և ատարկու պատերազմի մէջ, որպէս պետական գործիչներ»։

Ուրեմն յանցանքը ժողովրդինն էլ չէ։ Բայց իրլանդացիների ողբալի դրութիւնն առակ է դարձել. ինչ է ուրեմն պատճառը։

Ահա այդ պատճառը կաշխատենք որոնել ուրիշ անգամ, Թէև դրա համար հարկաւոր կըլինի մեզ փոքր ինչ պատմութեան խորքերը գնալ։ Բայց մենք համառօտ կանցնենք։ *)

Մ. Մ.

---

*) Իրլանդական խնդրի առթիւ ազգային գրականութիւն կայ կազմուած։ Այդ երկրի մասին գրել են Ջեմս Մակինէյր, Տրինէր, Միլը, Հելփսիսը, Լաբլէն, Պէրը և ուրիշ շատերը. այդ երկրի մասին գրուելացաւ նաև ռուսաց պարբերական Թերթերի՝ «Русск. Слово.»-ի, «Юрид. Вѣст.»-ի, «Рус. Вѣст.»-ի, «Женск. Вѣст.»-ի, «Вѣст. Евр.»-ի, Русск. Вѣд.»-ի, «Отеч.-Зп.»-ի և այլ հանդէսների ու լրագիրների մէջ, որոնցից պիտի օգտուենք Իրլանդիայի մասին յօդուածները գրելիս, բայց առաւելապէս «Եւրոպական ազգերի կեանք»-ից «Русск. Вѣд.»-ից։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—«Mémorial biplomatique» Թերլեն ասում է, որ Անգլիան շահ ունի այն բանում, որպէս զի Իտալիան չընտրակէ եռապետական դաշնագրի այն պայմանները, որոնցով ինքն, Իտալիան, կապուած է Գերմանիայի և Աւստրիայի հետ. Իտալիան չափից դուրս մեծ նշանակութիւն է տալիս Անգլիայի օգնութեանը, որպէսզի վըստահանայ նրան դժգոհութիւն պատճառել, եթէ մինչև անգամ Գերմանիան և Աւստրիան համաձայն էլ լինէին, որ նա հրատարակէը իւրենց դաշնագրի յետեալ պայմանները.

—Իչխան Բիսմարկը գերմանական զինուորական նոր օրէնագծի մասին հետևեալ կարծիքն է յայտնել. այդ օրէնագիծն իւր այժմեան ձևով չի կարող ընդունուել և մի անհրաժեշտ բան էլ չէ ամենևին. իւր այժմեան ուժերով, եթէ այդ ուժերը լաւ կառավարուեն, Գերմանիան յաղթող կըհանդիսանայ մինչև անգամ եթէ երկու սահմաններից էլ նրա վրայ յարձակում գործէին. Զինուորների խնայական ծառայութեան ժամանակն երկու տարի սահմանելն անխոհեմութիւն է. Ռուսիան և Ֆրանսիան պատերազմ չեն ցանկանում, և 2—3 տարի դեռ պատերազմ չի լինիլ.

—New-Iork Herald»-ին հաղորդում են, որ Միացեալ Նահանգների երկաթուղիների ծառայողները պատրաստում են մայիսին, այսինքն հենց Չիկագոյի համաշխարհային քուրսահանդէսի բացման ժամանակ, աշագին գործադուլ անելու, որպէսզի դրանով դադարեցնեն երկաթուղիների երեսեւկութիւնը և ստանան իրենց պահանջած զիջողութիւնները. Գործադուլը տարածուած կըլինի ամբողջ երկրում սկսած Խաղաղ ովկիանոսից մինչև Աւտլանտեան ովկիանոսը.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լոնդոնում հրատարակուող յայտնի «Pall Mall Gazette»-ը 500,000 րուբլով անցել է իւր նախկին տիրոջից Լևենֆիլդ անունով Փինանսիստի ձեռքը, որով և իւր ուղղութիւնը փոխել է ունիոնիստների օգտին. Առաջ «Pall Mall» Թերլեը բուռն եռանդով պաշտպանում էր Գլադստոնի քաղաքականութիւնը, իսկ այժմ անցել է հակառակ բանակի ձեռքը. Այդպիսով Լոնդոնի վեց յայտնի մեծ Թերլերից հինգը Գլադստոնի քաղաքականութեան հակառակ ուղղութեան են պատկանում. «Times», «Standard», «Daily Telegraph», «Morning Post», և «Pall Mall»-ը.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-Դ Ա Ր»-Ի ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 հոկտեմբերի.—«Нов. Вр.» հաղորդում է, պետական խորհրդի վերջին երեք նիստերը նուիրուած են եղել տարեկան 500 րուբլուց աւել եկամուտներ ունեցող բնակարանների վրայ հարկ դնելուն, երկաթուղիներով և չոգենաւերով բերուող մի քանի ապրանքներից իւրաքանչիւր պուդի համար հարկ առնելուն վերաբերեալ խնդիրների քննութեանը. Մատդուելիեն կայ ապելացնելու գաբելջից և նաւթային բերքերից առնուող տուրքը, նոյնպէս և չքեղութեան առարկաների, օտարերկրեայ գայլուկի և հողը պարարտացնելու նիւթի մաքսահարկերը.

«Нов.»-ն հաղորդում է, որ մատդուելիեն կայ ծխախոտի ակցիզը բարձրացնելու մինչև երկու րուբլի իւրաքանչիւր պուդի համար.

ԱԹԵՆՔ.—Ռուսաց Թագաժառանգն այսօր պրինց Դէօրգի հետ Կորնթոս ուղևորուեց.

ՊԱՐԻԶ.—Դոկտ զօրքը Թշնամիների հետ երկար և խիստ ընդհմտաւորութիւնից յետոյ տիրեց Կանոյենց.

ՎԻԵՆՆԱ.—Ռուսաց Թագաժառանգը Վիեննա ժամանելով, որպէս Ֆրանց Իոզիֆ կայսրի հիւր իջել է Հոֆբուրգում. Նորին Բարձրութեան պատուին ընտանեկան մեծ ճաշ կըլինի. Աւստրիայի միջով անցնելու համար, կայսրը Թագաժառանգի հայեցողութեանը Թողեց արքայական գնացքը, որը կըտայ Նորին Բարձրութեան համար մինչև Իտալիայի սահմանը.

ՆԵՈՒ-ՅՕՐՔ.—Միացեալ Նահանգների հաստատակապետութեան նախագահի ընտրութիւնների ժամանակ կլիվլենդը յաղթանակ տարաւ ՆեուՅօրքի և ուրիշ շատ նահանգներում.

ԲՈՒԴԱ-ՊԵՍՏ.—Սապարիի ունգարական ամբողջ միներստութեան հրաժարականն ընդունուած է.

ՊԱՐԻԶ.—Ոսակիանական մասում պայթումի ժամանակ սպանուած են 4 հոգի, բացի դրանից, մէկը մահացու կերպով վիրաւորուած է. Պատգամաւորների ժողովում խնդիր է յարուցուած եղած պայթումի մասին. մեղադրում էին կառավարութեանը, որ նա թոյլ է. Լուբէն պատասխանում է, որ կառավարութիւնն անողոք կերպով կըվարուի այդ բարբարոսական վարմունքների հեղինակների հետ, խնդրում է բոլոր բարեսիրտ քաղաքացիներին պիմադրել չարամիտ վարդապետութիւններին և պատասխանել նրանց, որոնք դրդում են Թշուառներին չարիք գործելու. Ֆերրումին ասում է, որ սոցիալիստների և անիշխանականների միջև ընդհանուր ոչինչ չկայ. Խոշոր մեծամասնութեամբ որոշում է կայացնում, որով գայրութի է յայտնում պայթումի առթիւ և հաւատ է յայտնում, որ կառավարութիւնը հաստատուն և աչալուրջ կըլինի.

ԲՐԻՒՍԻԼ.—Մի քանի խումբ բանուորներ, որոնցից մի քանիսն եկել են գաւառներից, մաս են գալիս փողոցներում, երգում են Մարսելիեզը և աղաղակում են «կեցցէ՛ համազգային Ձայնատուութիւնը». Այն Ճանապարհի վրայ որտեղերով պիտի անցնի Թագաւորը, և պալատի առաջ բազմաթիւ ժողովուրդ է կանգնած, քաղաքացիական պահնորդների խումբը պահպանում է կարգը. Խիստ ագիտացիա է նկատուում, բայց ոչ մի մեղնադէպ չէ եղել. Մի քանի Հերթակալութիւններ են եղել Թագաւորի անցնելու ժամանակ լսուած քսմնեցուցիչ բացականչութիւնների համար. ոստիկանութիւնը բազմիցս ցրեց հաւաքուած ամբոխին. Թագաւորը կարդաց գահական Ճառը, որի մէջ յոյս յայտնեց, որ վերաքննուած սահմանադրութիւնը համաձայնութեան, խոհեմութեան և առաջադիմութեան գործ կըլինի. Պատգամաւորների ժողովը կըշարունակէ քննել այն Ծրագիրները, որոնք կազմուած են բանուորների կեանքը բարելաւելու համար.

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԻԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Պոստային կառքերի երթևեկութիւնը ռազմա-վիրական տրակտ վրայ.

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորուում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում Թիֆլիս է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին.

Վից հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորուում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամ, 7-ին.

Ուշադրութեան ընդունելի՝

Երեւելի Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև.

Բաղնիքը պատրաստ է գնում.

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովոռոսիսկի վրայով.

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին ջրանաւուս ընթացքով Փոթի և վրայով բոլոր նաւահանգիստները.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս.

Բաղնիքը հատնում է.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով. Ուրբաթ օրերը, առաւօտեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով Կերչի և Նովոռոսիսկի վրայով.

Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից.

Պոստային և ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երեսփոխանական Փոթիի, Բաթումի և Օդեսայի միջև.

Բաղնիքը հատնում է.

Պոստային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օդեսայից կիրակի օրերը երեկոյեան.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին.

Բաղնիքը պատրաստ է գնում.

Պոստային-մարդատար շոգենաւը Օդեսա և Ճանապարհին գտնուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին.

Պոստային-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթում երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին.

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օդեսա և Ճանապարհին գտնուած նաւահանգիստները.

Աղրանքների մարդատար գին.

Բաթումից գալս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 1-ին.

Բաթում հասնում է երեքշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 2-ին.

Ապրանքակիրը մարդատար շոգենաւերի վրայ ընդունում են II և III կարգի ուղևորներ և առանց ուտեստի պաշարեղէնի.

Դործակալութիւնը գտնում է Թիֆլիսի ազ. բակի շինութեան մէջ № 117 և 118.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑ

ընդունելութիւնը ցերեկուայ ժամը 8-ից մինչև 12-ը և երեկոյեան ժամը 6-ից մինչև 8-ը, վեներական, կաշուի և ականջի հիւանդութիւնների համար.

Սոլոլակ, Սպրավոյա փ., սեփ. տուն.

ՆՈՅՆ ՏԵՂՈՒՄ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԱՆՆԱՆԵՐ

(Բաղնիք) շքեղ և առողջապահօրէն կահաւորուած.

50—12

КАКАО
·БЕЗЪ МАСЛА·
ВЫСШАГО КАЧЕСТВА
МИНУТНОЕ
ПРИГОТОВЛЕНІЕ
ФАБРИКИ·
С.СІУиК·

(М.) 24—12

ՍՈՖԻԱ ԴԵՄԵՆԴԵԻԱՆ, որը վկայական ունի Աբհենատուրայ վարչութիւնից և իրաւունք ձեռագործի պատասխանատուութեան. կարու ձևի դասեր է ուզում տալ ձիրարար աղքատ ծնողների տղկանց, Թանգոյեան ուսումնարանում (Կաւկիասի Առաուածածին եկեղեցու գաւթում).

Պայմանների մասին հարցնել Թանգոյեան ուսումնարանում, շաբաթ օրերը առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 4-ը.

10—7

ՆԿԱՐԻՉ ԵՆՈՎՔ ՆԱԶԱՐԵԱՆ

Կոջոր ամարանոցից Թիֆլիս վերադարձած լինելով, բնակւում է Պուշկինսկայա փողոցում, առաջ Հոգևոր սեմինարիայի և աքսէլի դիմաց «Афины» հիւրանոցում № 10.

Նկարչին տեսնել ցանկացողները կարող են գտնել նրան իւր բնակարանում ամենայն օր երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը.

10—9.

ЗОЛОТОЙ ШАТОЛЪ
ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО.
ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО
ВѢСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.
А. СІУиКЪ
МОСКВА
А. СІУиКЪ

(М.) 52—12

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

ՏԱՄՆՈՒՄԷԿԵՐՈՐԻ ՏՈՒՐԻ

Աւետրական Կուրսերի նպատակն է՝ մանագիտական աւետրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ Հաշուապահներ. Աւարտողներն ստանում են ատեստատներ.

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Աւետրական Տնտեսութիւն, 2) Աւետրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւնհամարիչի վրայ, 5) Աւետրական Թղթակցութիւն, 6) Աւետրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն.

Ուսումն սկսուելու է հոկտեմբերի 1-ից. Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սօլօլակում՝ Ալէքսանդր Փրիդոնովի տանը №9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում. Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում. Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисѣ. С. П. Мануэльянцу.

(319) 25—15

ԵՂԲ. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆՆԵՐԸ

Պատիւ ունին ծանուցանելու պ. պ. վաճառականներին, կոմիսիոներներին և առևտրական գործակալներին, որ Ն./տ. սեպտեմբերի 1-ից ԲԱԳՈՒԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՑ ԵՆՔ ԱՐԵԼ ԿՈՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ և ամեն տեսակ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կատարելու համար ԳՐԱՍԵՆԵԱԿ. Մասնաւորապէս կատարում ենք նաև նաւթային գործեր.

Մենք յարաբերութիւն կունենանք ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ, ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ երկրների և ՌՈՒՍԻԱՅի գլխաւոր քաղաքների հետ, իմիջի այլոց Աստրախանի, Նիժնի-Նովգորոդի, Մոսկուայի և Օդեսայի ու Կովկասեան բոլոր նշանաւոր քաղաքների և երկաթուղու կայարանների հետ.

Մեր կողմից ոչ մի ջանք չպիտի խնայենք, որ ապրանքների մատակարարելը, վաճառելը, ուղարկելը կատարուին բարեղճութեամբ և շուտափոյթ.

ՄԵՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԼԻՆԻՆ ՄԱՏՉԵԼԻ և ՁԵՌՆՏՈՒ.

Եղբարք Տէր-Նիկողոսեաններ:

Իսկ հետագային
Братья Теръ-Никогосяны.
Баку Терникогосяны.

(340) 30—14

Дозволено цензурою. Тифлисъ 29-го Октября 1892 г.

Տպարան «Կաւկազ» լրագրի

Типографія, «Кавказъ» Гол. пр. домъ Читахова.